ՀՏԴ 82-9(070:479.243) *Լրագրություն*

Շուշան Խաչատրյան, ***բ.գ.թ., դոցենտ***
Արցախի պետական համալսարան, բանասիրական ֆակուլտետ,
գրականության և լրագրության ամբիոնի վարիչ,
Shush22@yandex.ru

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԷՋԵՐՈՒՄ

Шушан Хачатрян, к. ф. н., доцент

ВОСПРИЯТИЕ АРЦАХСКОЙ ПРОБЛЕМЫ ЗАРУБЕЖНЫМИ ИЗВЕСТНЫМИ ЖУРНАЛАМИ

В статье представлено восприятие арцахского вопроса со стороны влиятельных американских и британских журналов, с момента возникновения данной проблемы с начала 1988 года на страницах западных газет и до обострения ситуации в апреле 2016года.

Подчеркивается важность информационно-пропагандистской политики этих газет, имеющих огромную аудиторию и комментарий вокруг арцахского конфликта, выявляются основные закономерности журналистских отзывов и основные черты восприятия конфликта зарубежными СМИ.

Ключевые слова: *Арцахский вопрос, американская пресса, британская пресса, западное медиаполе, конфликт.*

Shushan Khachatryan, PhD, Associate Professor

THE PERCEPTION OF THE ARTSAKH PROBLEM BY THE FOREIGN PERIODICALS

The article presents the perception of the Artsakh issue by famous American and British magazines starting from history of this problem since the beginning of 1988 on the pages of Western newspapers up to the escalation of the situation in April of 2016.

The importance of the information and propaganda policy of these newspapers which has a huge audience and comments of the Artsakh conflict are emphasized in the article, besides the main regularities of journalistic reviews and the main features of the perception of the conflict by foreign media are revealed.

Keywords: *Artsakh problem,American press, British press, Western mediafield, conflict.*

ԶԼՄ-ների դերակատարությունը հակամարտությունների լուսաբանման գործում տեսականորեն կարող է արտահայտվել երկու տարբեր և իրարամերժ ձևերով. «մի դեպքում լրատվամիջոցները ակտիվ մասնակցություն ունեն հակամարտություններում և պատասխանատվություն են կրում բռնությունների աճի համար, մյուս դեպքում՝ գործ ունենք հակամարտություններից անկախ զանգվածային լրատվամիջոցների հետ, որոնք նպաստում են հակամարտությունների հանգուցալուծմանը և բռնությունների մեղմացմանը»[1]: Վերջին տարիների լրագրագիտական հետազոտական վերլուծությունների արդյունքում գիտական շրջանառության մեջ է դրվել այն դրույթը, որ ԶԼՄ արտադրանքը կարող է ազդել հանրության տրամադրության վրա և հրահրել ազգամիջյան և միջէթնիկական հակամարտությունների[2]: Ցավոք, պատմությանը հայտնի են բազմաթիվ օրինակներ, երբ ԶԼՄ-ներում տեղ գտած տեղեկույթը նպաստել է միջէթնիկական ատելության խորացմանը: Դրանցից է, օրինակ՝ 1994 թվականի ապրիլին սկսած և կես միլիոն մարդկային կյանքեր խլած Ռուանդայի ցեղասպանությունը: Ալլան Թոմփսոնի հեղինակած «The Media and the Rwanda genocide» («Զանգվածային լրատվամիջոցները և Ռուանդայի ցեղասպանությունը») գրքում[3] նշվում է այն մասին, որ տեղական ԶԼՄ-ները որոշիչ դերակատարություն են ունեցել հակամարտության խորացման և մարդատյաց տրամադրությունների ստեղծման մեջ: Խոսքն այստեղ քարոզչական այն հնարքների մասին է, որոնք նպատակային հանրային գործողությունների էին դրդել:

Ճանաչված դիվանագետ և միջազգային հարաբերությունների տեսաբան Ջորջ Քեննանը քննադատում է ԶԼՄ-ների՝ քաղաքական կարևոր հիմնահարցերում ազդեցիկ խաղացողի դերում ներակայացումը ու մեծարումը որպես չորրորդ իշխանության, ասելով, որ «միջազգային

[1] https://www.mediasupport.org/wp-content/uploads/2012/11/ims-voices-of-war-2006.pdf
[2] https://scholarship.law.missouri.edu/cgi/viewcontent.cgi?article=1533&context=jdr
[3] THE MEDIA AND THE RWANDA GENOCIDE, Edited by Allan Thompson, published 2007 by Pluto Press.

հարաբերությունների կայունության և կանխատեսելիության համար քաղաքական ոլորտի վերահսկողությունը պետք է մնա ազգային քաղաքական էլիտայի ձեռքում»[1]:

Մի խումբ գիտնականներ պնդում են, որ համաշխարհային հեռուստատեսային ցանցերն են կանխորոշում հակամարտությունների շուրջ զարգացող քաղաքականությունները, այդ թվում նաև՝ մեծ տերությունների: Այս տեսությանը մեդիաուսումնասիրության ոլորտի մասնագետներն տվել են «CNN էֆֆեկտ» [2] անվանումը, որի կիրառումը արտասահմանյան հեղինակավոր պարբերականների կողմից, այդ թվում նաև՝ արցախյան հիմնախնդրի լուսաբանման ժամանակ, շատ տարածված մոդել է:

Արտասահմանյան հեղինակավոր պարբերականների (բրիտանական, ամերիկյան, ֆրանսիական, նորվեգական, իտալական,գերմանական, իսպանական) էջերում Արցախյան հիմնախնդրի լուսաբանման ընթացքում տարբեր ձևաչափերում, թեմատիկ և ժանրային ընդգրկումներով անդրադարձ է կատարվում ղարաբաղյան հակամարտության նախապատմությանը , Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև հակամարտության կարգավորման ներկա փուլին ու հեռանկարներին, արտաքին քաղաքականության հարցերում ԼՂՀ, Ադրբեջանի, մեծ տերությունների դիրքորոշումներին, մարդասիրական խնդիրներին, սոցիալ-տնտեսական իրավիճակին վերաբերող մի շարք այլ հարցերի: Կարևորելով զանգվածային մեծ լսարան ունեցող սույն պարբերականների վարած տեղեկատվական-քարոզչական քաղաքականությունը և արցախյան հակամարտության շուրջ ծավալվող ուղեգծի մեկնաբանումները, ուրվագծվում են լրագրային արձագանքների հիմնական օրինաչափությունները և արտասահմանյան մեդիադաշտի կողմից արցախյան խնդրի ընկալումների հիմնական առանձնահատկությունները:

Արցախյան հիմնախնդրին ու Արցախին առնչվող հետաքրքիր հրապարակումներից է իտալական «Gli Occhi Della Guerra» ինտերնետ-պորտալում հրապարակված «Գոյություն չունեցող երկրի պատմությունը» հրապարակախոսական հոդվածը, որտեղ հեղինակ Օսվալդո Սպադարոն պետությունների կայացումը և հետագա ճակատագիրը կապում է մարդու ստեղծման հետ. « Պետությունները նման են մարդկանց, նրանք ծնվում են եւ մահանում: Որոշ պետությունների բախտը ժպտում է. նրանք հայտնվում են բարեկեցության համապատկերում, նրանց ընդունում են գովասանքներով, աջակցում են որոշ արտասահմանյան տերություններ, ուղղորդում դեպի պայծառ ապագա, ներկայացնելով այն, ինչը ժամանակին կոչվում էր «միջազգային կոնսենսուս»: Մյուսների

[1] *Piers Robinson.* The CNN Effect: The Myth of News, Foreign Policy and Intervention. — Routledge, 2005-07-08. — 190 с. — ISBN 9781134513147.

[2] CNN էֆֆեկտի տեսությունը, դիտարկելով ժամանակակից հեռահաղորդակցության միջոցները՝ հեռուստատեսությունը, ռադիո, օն-լայն նորություններ և այլն, առանձնացնում է դրանց բնորոշ մի քանի հատկանիշ,որոնց շնորհիվ հերարձակվող տեղեկատվությունը դառնում է ավելի տպավորիչ, հետևաբար նաև ավելի արդյունավետ սոցիալական դիրքոշումների ձևավորման տեսնակյունից:Առանձնահատկությունների շարքում կարելի նշել.

“Հիմա և այստեղ/ Live” – Այս սկզբունքը ենթադրում է, որ տեղի ունեցած իրադարձությունը լուսաբանվում է իր կոնտեքստի մեջ՝ այն ժամանակում և այն վայրից, որտեղ և տեղի է ունենում, դրանից չկտրվելով: Լուսաբանումը տեղի է ունենում իրադարձության զարգացման զուգահեռ: Սա թույլ է տալիս խոսել դեպքի ներկայացման օբյեկտիվությունից ու չեզոքությունից. այն վերափոխելու ժամանակ պարզապես չկա:

Իրական դեպքեր և դեմքեր– այս սկզբունքը կարելի է ասել, որ բխում է նախորդ սկզբունքից. Եթե իրադարձությունը ներկայացվում է իր կոնտեքստից չկտրված, հետևաբար ներկայացվող կերպարներն նույնպես իրական պետք է լինեն: Այսպիսով սա նույնպես հնարավորություն է տալիս ավելի օբյեկտիվ նայել իրողությանը: Հենց սրա շնորհիվ մարդիկ դադարում են «թատրոն» նայել հեռուստատեսությամբ, այլ տեսնում են իրական կյանքում ապրող իրենց նման սովորական մարդկանց:

I-reporter– Այժմ ոչ միայն ժամանակակից տեխնոլոգիաներն այլ նաև հեռուստատեսություններն և էլեկտրոնային Զլմ-ը թույլ են տալիս յուրաքանչյուր մարդու դառնալ իրենց թղթակից, իրենց մի մասնիկ: Յուրաքանչյուր ոք, լինելով ինչ-որ դեպքի ականատես, կարող է ստեղծել նորություն, պատրաստել ռեպորտաժ և տեղադրել այն ինչ-որ ԶԼՄ-ում: Այսպիսով, ստացվում է, որ ԶԼՄ-ը և հասարակությունը լուծվում են միմյանց մեջ. Ժամանակին գոյություն ունեցող վարկածը՝ ԶԼՄ-ը սպասարկում են որոշակի էլիտայի շահերը, հերքվում է և դառնում է ոչ ակտուալ:

Քաղաքական ցենզուրայի բացակայություն– Վերոհիշյալ կետերի իրականացումը հանգեցնում է այն մտքի, որ լսարանին մատուցվող տեղեկատվությունը չի ենթարկվում ոչ մի տեսակի խմբագրման, խեղաթյուրման, հետևաբար իրականությունը այնպիսին է ինչպիս կա՝ ինչպիսին ներկայացվում է ԶԼՄ-ի միջոցով:

դեպքում իրականությունն այլ է: Նրանք նման են այն երեխաներին, որոնք ծնվել են ինչ-որ հանգամանքների բերումով. ոչ ոքի պետք չէն, դաստիարակվում են է առանց ծնողների, բայց ամենակարեւորը՝ առանց հոր, ով կարող էր ճանաչել նրանց հայրությունը: Նրանք ծնվում են, եւ բոլորն այստեղ են: Սրանք դե ֆակտո պետություններ են, բայց նրանց չեն ճանաչում գոյություն ունեցող պետությունների մեծ մասը: Սա էլ կոչվում է աշխարհաքաղաքականություն »[1]:

Գերմանական պետական միջազգային հեռուստառադիոընկերության «Deutsche Welle»-ում («Գերմանական ալիք») ընթերցում ենք «Ղարաբաղը երեքի համար» վերնագրով հոդվածը, որտեղ հեղինակ Իվան Պրեոբրաժենսկին բանակցային-դիվանագիտական տիրույթում վերլուծության է ենթարկում Սարգսյան-Ալիև հանդիպումների քաղաքական նշանակությունը և հեգնորեն արձագանքում հակամարտության մոտալուտ լուծման ակնակալիքները. « Միաժամանակ ուզում եմ և լացել,և ծիծաղել, երբ որոշ եվրոպական եւ նույնիսկ ռուսական պարբերականներ գրում են, որ հենց հիմա խորամանկ ծրագրի արդյունքում ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Քերրին Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի համար կիթառ կնվագի և ղարաբաղյան հակամարտությունը կլուծվի: Դավադրության հիմքերն, ցավոք, այնքան խորն են, որ շատերին թվում է, թե առաջնորդները նեղ շրջանակներում կհավաքվեն ճաշկերույթի սեղանի շուրջ եւ արդեն սրճելու ժամանակ կստորագրեն խաղաղության համաձայնագիր, որտեղ հաշվի կառնվեն բոլոր փոխադարձ պահանջները եւ խնդիրները»[2]:

2016 թվականի ապրիլի 11-ին Washington Post-ի «Կարծիք» բաժնում հանդիպում ենք 2006-2009թթ. Լեռնային Ղարաբաղի հակամարտության ԱՄՆ միջնորդ եւ 2010-2011թթ. Ադրբեջանում ԱՄՆ դեսպան, Ատլանտյան խորհրդի անդամ չհանդիսացող Մեթյու Բրայզայի «ԱՄՆ-ն չպետք է անտեսի ղարաբաղյան հակամարտությունը. այն չափազանց վտանգավոր է» վերտառությամբ հոդվածը, որտեղ Բրայզան իր զարմանքն է հայտնում, որ վերջերս Վաշինգտոնն ու Մոսկվան քիչ են համագործակցում Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ: «Հնարավոր է, Պուտինը ցանկանում է զրկել փոխնախագահ Բայդենի պոտենցիալ վաստակը…, Կամ, գուցե, Պուտինին զայրացրել է այն, որ Սերժ Սարգսյանը եւ Իլհամ Ալիեւը հանդիպել են Սպիտակ տանը » [3]: Հեղինակն այն կարծիքին է, որ Պուտինի ջանքերն ուղղված են նրան, որ Ռուսաստանի հեղինակությունը բարձրանա, այլ ոչ թե հանգուցալուծվի ղարաբաղյան հակամարտությունը:

1826 թվականից լույս տեսնող ֆրանսիական ամենօրյա **«Le Figaro»** թերթի էլեկտրոնային տարբերակում թղթակից Նիկոլ Վինի՝ «Անկարայի ստվերը Ղարաբաղի վրա»[4] հոդվածում հեղինակը միջազգային հանրության ուշադրությանն է հրավիրում այն փաստը, որ « խորտակված ԽՍՀՄ-ից ժառանգված ամենավտանգավոր «սառեցված հակամարտությունը» Ղարաբաղյան հակամարտությունն է»:

Սառեցված հակամարտության վտանգավոր և պայթունավտանգ լինելու մասին է խոսում նաև ամերիկյան The Huffington Post համացանցային պարբերականի թղթակից Պատրիսիա Լալոնդը,ում հրապարակումներում գերիշխում են ադրբեջանամետ դիրքորոշումներն և խոհումության կոչեր են հնչում առ մեծ տերությունների ղեկավարները[5]:

Ֆրանսիական մամուլում արցախյան հիմնախնդրին առչվող հրապարակումներից է Ֆրանսիայի հետախուզության աշխատակից, ֆրանսիական հետախուզության հետազոտությունների կենտրոնի փոխտնօրեն, իսլամական ահաբեկչության եւ կազմակերպված հանցագործության դեմ պայքարի փորձագետ, պաշտոնաթող սպա Ալեն Ռոդերի «Atlantico» լրատվական թերթում տպագրված «Ինչպե՞ս է իրավիճակը Լեռնային Ղարաբաղում» վերտառությամբ հոդվածը, որտեղ հեղինակը մանրամասն դիտարկում է պատմական այն անցքերը, որոնց արդյունքում Լեռնային Ղարաբաղը սեփական ճակատագիրը տնօրինելու հայտ էր ներկայացրել , ինչպես նաև անդրադառնում է քառօրյա սրացմանը. «» [6]:

Իսպանական հեղինակավոր և ամենաընթերցվող պարբերականներից մեկում՝ «El País» («Աշխարհ») հասարակական-քաղաքական օրաթերթում տեղ գտած «Լեռնային Ղարաբաղի

[1] http://www.occhidellaguerra.it/storia-del-paesi-non-esistono/
[2] https://inosmi.ru/politic/20160622/236933946.html
[3] https://www.washingtonpost.com/opinions/nagorno-karabakh-conflict-is-too-dangerous-to-ignore/2016/04/11/1e32fc44-ff23-11e5-9d36-33d198ea26c5_story.html
[4] http://www.lefigaro.fr/international/2016/04/14/01003-20160414ARTFIG00280-l-ombre-d-ankara-sur-le-karabakh.php?redirect_premium
[5] https://www.huffingtonpost.fr/patricia-lalonde/haut-karabagh-reglement-du-conflit_b_9622044.html?utm_hp_ref=fr-international
[6] http://www.atlantico.fr/decryptage/armenie-azerbaidjan-ou-en-sont-hostilites-alain-rodier-2655128.html/page/0/1

հակամարտությունը կրկին ցնցում է Կովկասը»[1] վերտառությամբ հոդվածում հոդվածագիր Պիլար Բոնետը «Հարավային Կոկասում գտնվող երկարմյա հակամարտության պատմություն ունեցող լեռնային անկլավի» մասին խոսելիս որպես տեղեկատվության հիմնական աղբյուրներ մատնանշում է միայն ադրբեջանցի քաղաքական գործիչ-փորձագետներին, կատարելով ադրբեջանամետ դիրքորոշումների վրա խարսխված մտահանգումներ, ինչպես օրինակ. «Հայաստանը կարող էր սկսել «անվտանգության գոտու» ապամոնտաժումը՝ թողնելով օկուպացրած յոթ վարչական շրջաններից երկուսը, - կարծում է խորհրդարանի պատգամավոր եւ միջազգային փորձագետ Ռասիմ Մուսաբեկովը: «Մենք պետք է օգտագործենք պահը: Եթե հունիս-հուլիսին առաջընթաց չլինի, ապա դեպքերը կսկսվեն բացասական լույսի ներքո, քանի որ ուշադրությունը կփոխանցվի այլ խնդիրների », - կարծում է պատգամավորը: Իր հերթին Խիկմատ Հաջիեւը կոնկրետ ժամկետներ չի նշում եւ ասում է, որ Մինսկի խմբի բանակցություններում առաջընթացը կարելի է ակնկալել մինչեւ մեկ տարի:»[2]

Նորվեգական խոշոր «Schibsted» մեդիակոնցեռնին պատկանող նորվեգական ամենաազդեցիկ օրաթերթը՝ «Aftenposten»-ը, պարբերաբար իր էջերում տեղ է տալիս ղարաբաղյան հակամարտության լուսաբանմանը, սակայն հեղինակ-փորձագետի անունից միշտ հանդես է գալիս Պեր Անդերս Յոհանսենը, ում հրապարակումներում նկատալի են ընդգծված հակառուսական և մասամբ հակահայկական տրամադրություններ: Այպես, օրինակ «Aftenposten»-ը Ռուսաստանին է վերագրում Կովկասում սառեցված հակամարտությունների, այդ թվում նաև՝ ղարաբաղյան հիմնախնդրի վերսկսման սցենարի հեղինակային իրավունքները, հիշեցնելով, որ «ռազմական, տնտեսական և քաղաքական ոլորտներում որպես գլխավոր հովանավոր հանդես է գալիս Ռուսաստանը»:[3]

Արցախյան հիմնախնդրի ընկալումների հանդիպում ենք նաև դանիական ամենատարեց պարբերականում՝ «Berlingske»-ում տեղ գտած հրապարակումներից մեկում , որի հեղինակ Աննա Լիբակը այն համոզմունքն է հայտնում, որ հակամարտության կերպարանափոխումը քառօրյա սրացման ինքնաբուխ չէր. «Չնայած հինգշաբթի հայտարարվեց հրադադարի մասին, քիչ մարդիկ են հավատում, որ մենք ականատես եղանք վերջին մեծ արյունահեղությանը: Քանի որ վերջին օրերի ռազմական գործողությունները, որոնք տասնյակ մարդկանց կյանք են խլել, հազիվ թե ինքնաբուխ հակամարտությունների արդյունք լինեին»[4]: Փորձելով կանխատեսել ղարաբաղյան հակամարտության հնարավոր հանգուցալուծման տարբերակը, Լիբակը գրում է. «Ռազմական գործողությունների թատերաբեմում միայն Ռուսաստանն ունի կամք և ռազմական ուժ, որպեսզի Ադրբեջանին ստիպի խելամտություն ցուցաբերի:…Շատերը համակարծիք են, որ ո՛չ Պուտինը, ո՛չ Էրդողանը հետաքրքրված չեն մեծ պատերազմով:Հնարավորություններ ստեղծում է ոչ թե պատերազմը, այլ դրա սպառնալիքը: Եվ դա ինքնին շատ վտանգավոր է:Կովկասում միշտ էլ ավելի հեշտ է եղել հրդեհ կազմակերպելը, քան մարելը »[5]:

ԶԼՄ-ների միջոցով հեղափոխությունների, լարված քաղաքական իրավիճակների և ռազմական գործողությունների մասին տեղեկատվությունը լրացվում է հանրային քննարկումների պակասը: Հակամարտության լուսաբանման գործընթացում բացապարզվում է արտասահմանյան հեղինակավոր վերոնշյալ լրատվամիջոցների արժեկշիռը և ազդեցությունը լսարանի վրա: Այս համատեքստում կարևորվում է իշխանությունից հասարակությանը փոխանցված տեղեկատվության ճշգրտությունը և այն, թե զանգվածային լրատվամիջոցը որքան լիարժեք է կատարում իր՝ հանրության քաղաքական կյանքի կարգավորողի գործառույթները: Թերևս սա է պատճառը, որ անհրաժեշտ է վերարժևորել ԶԼՄ-ների դերը ռազմական-քաղաքական հաղորդակցության ոլորտում, ինչն էլ թույլ կտա գնահատել ԶԼՄ-ների դերը ռազմական հակամարտության տարբեր շրջափուլերում, որոշել լրագրության մասնակցության աստիճանը հասարակական գիտակցության և մշակույթի մեջ պատերազմի ձևավորման և վերջնական ամրապնդման գործում:

[1] https://elpais.com/internacional/2016/06/02/actualidad/1464891795_046432.html
[2] https://elpais.com/internacional/2016/06/02/actualidad/1464891795_046432.html
[3] http://www.aftenposten.no/verden/Europas-frosne-konflikter-De-levde-en-gang-i-et-ferieparadis-Na-fester-Putin-grepet-619731b.html?spid_rel=2
[4] https://www.b.dk/globalt/erdogan-og-putin-laegger-i-ovnen-til-en-storkrig-med-nato
[5] https://www.b.dk/globalt/erdogan-og-putin-laegger-i-ovnen-til-en-storkrig-med-nato